

# ՆՈՐՈՐ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՅԻ ԲՊԵՍՏՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏԵ Ե ՈՒՂՂՆԷ ԱՌ  
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ ԼՍԱՐԱՆ  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Չեռագիրներն եւ չեն դարձուիր:  
ԱՐՏՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

Լ Ր Ա Գ Ի Ր  
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՅԻՆԻ ԶՈՐԲԵՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՈՒ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ	
ՂՐԵ. ՈՂԶ	
Գահիրէի համար	արեկան 50
» » վեցամսեայ	30
Շրջակայից »	արեկան 60
» » վեցամսեայ	35
ԱՐՏԱՍՏՆԱՆԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան . . . . .	Յրանգ 18
վեցամսեայ . . . . .	» 10
ՌՈՍԻՈՅ ԵՒ ԿԱՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան . . . . .	րուբլի 7
վեցամսեայ . . . . .	» 4
ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿԱՆԻՅԻ ԵՒ ՌՂԲԱՍԱՐԻ ԾԱՌԵՐ ԵՒ ԹԵՐԻՖԻՆ ՎԱՐՉՈՒՔԵԱՆ ՎՐԱԿ	

ՇԱՔԱՅ 7/20 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՄԼՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 29

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ ՏԱՐԻՈՑՑ ՕԳՈՍՏՈՍԻ 11ԷՆ ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՑՈՒՑՈՒՑԻՑ ԾԻՉ ՏԻՍԱ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»Ի ԸՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՎՈՒՅԻՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԹԻՒՆ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՈՒԹԱՅ ԹԱՅՏԱՐԱՐԵԼ ԹԷ «ՆՈՐ ՕՐ»Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՏԻՍԱ ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐՈՒՄԷՆ ՍԿՍԵԱԼ ԴՈՒՐԱՐԵԱԼ Է «ՆՈՐ ՕՐ»Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ. 22 ՍԵՊՏ. 900

«Նոր Օր»ի վարչութիւնը կը խնդրէ Արտասահմանի ու կողմասի արգոյ բաժանորդներէն որ հաճին պահանջել հրկտողով մը «Նոր Օր»ի պակաս ստացուած թիւերը, որոնք պիտի ղրկուին անմիջապէս:  
Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր» ստացող բոլոր կողմասի հայ թերթերու ու Հանդէսներու Պատ. խումբագիրներէն որ իրենց հրատարակութիւնները փոխանակեն «Նոր Օր»ի հետ:

## ՀԱՅ ՈՐԲԱՆՑՆԵՐՆ ՈՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ

(Շարունակութիւն Օտար թիւէն)

### ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՍՍԿԱՐԳ

Դիւանագիտականէն յետոյ կուգայ դատաստանական դասակարգը որուն մէջ Եգիպտահայն միւսնոյն նշանաւոր տեղը կը զբաւէ:  
Գահիրէի մէջ վսեմ. Եուսուֆ պէյ Աղիզ՝ իբր անդամ միջազգային դատարանի, իսկ Աղեքսանդրիոյ մէջ վսեմ. կարապետ պէյ Բէիզեան իբր խորհրդական Միջազգային բարձրագոյն վերաքննիչ Ատենի, և վսեմ. Արթին պէյ Բէիզեան՝ իբր անգամ Միջազգային Նախնական դատարանի, Եգիպտոսի դատաստանական շքր.

ջանակին ակնաւոր դէմքերն են, ազնուական ցեղէ սերած:  
Ազգային ու միջազգային շրջանակին մէջ իրենց ընծայուած յարգանքն ու իրենց վայելած ճշմարիտ համբան՝ բարոյական հարստութեան հազուադիւր գանձ մ'է, որ անհուն սիրտ փանք կը ներշնչեն մեր որբերուն:  
Բայց մեր ուղղած գիծէն շեղած չըլլալու և հաշուական գործողութիւնը հաւատարմօրէն կատարած ըլլալու համար, թոյլ տրուի մեզ նշանակել թէ՛ յիշեալ անձինքներու կարողութեան քանակը, կը ներէ առ նուազն տասը որբ խնամել:

### ՀՈՂԱՏԵՐ ԴԱՍՍԿԱՐԳԸ

Սոյն դասակարգի հարստութիւնը մասամբ հողային ըլլալով 160 հազար ոսկոյ կը հաշուի:  
Ա. Գահիրէ — հարստութիւն վսեմ. Տ. Գրիգոր Գանչելարի, Նախկին Ռուսական Հիւպատոս Ի Գահիրէ:  
Բ. Գահիրէ. — հարստութիւն Տ. Պ. կարապետեանի. Պօղոս Էֆ. Ի մահուամբ՝ իւր ժառանգութիւնը բաժնուեցաւ մի քանի ժառանգորդներուն մէջ. վերոյիշեալ գումարը իւր որդւոյն Տ. Պետրոս կարապետեանի ինկած բաժինը կը ներկայացնէ, ի բաց առեալ հանգուցեալ բարերարին՝ Ի նպաստ Ռուսահայ բարեգործական հաստատութեանց ըրած կտակն որ վէճի ներքե Է:

### ՎԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԴԱՍՍԿԱՐԳ

Սոյն դասակարգի հարստութիւնն է. Ա. Գահիրէ և Աղեքսանդրիա. — Տեաք Թ. և Կ. Մաթոսեան վաճառատուն. հակառակ իւր անթիւ մրցակիցներուն, Եգիպտոսի մէջ ամենէն մեծաքանակ ծխախոտ սպառող վաճառատունն է. իւր իսմայիլիէի գործարանին մէջ ութը հարիւրէ ակտի գործաւորներ կ'աշխատին:  
Սոյն ընկերութիւնը մօտերս անունն ընկերութեան վերածուելով և որոյ բաժնեթուղթերը հրապարակի վրայ ընդունելութիւն պիտի գտնեն:  
Բ. Գահիրէ — Թոփալեան վաճառատուն կերպասեղինաց:  
Գ. Գահիրէ և Աղեքսանդրիա. — Մեկրեան եղբարց վաճառատուն. Մաթոսեան վաճառատունէն վերջը՝

մեծաքանակ սպառող վաճառատունն է սա:

Դ. Աղեքսանդրիա. — Տեաք Հայկ Էբիզէր, Եգիպտական կառավարութեան պիտոյք հայթայթող ծանօթ վաճառական մ'է, միանգամայն հողագործ:

Ե. Գահիրէ. — Փ. Եղապեան. Սեղանաւոր:

Այս դասակարգին հարստութեան գումարը առ նուազն յոյս հարիւր հազար ոսկի կրնայ հաշուուի:

Ինչպէս որ ի վերև յիշուած էր, թոյլտուութիւնն ունեցանք, ամիսփել միմիայն հարստութիւնը և նիւթական կարողութիւնը այն ամեն անոնց՝ որոնք արդէն իրենց հրապարակային համբաւով ու գործառնութեանց ընթացքով հանրութեան աչքին զարկած ըլլալով, պարտէին նաև գրաւել «Նոր Օր»ի աշխուրջ ուշադրութիւնը:

Նոյն ինքն այդ դասակարգերին պատկանող տասնեակ և թերևս ակտի անդամներ ևս կը գտնուին, զոր զանց առինք նշանակելու, որովհետև ատոնք ըստ քաղաք տեղեկութեանց պարզապէս բարեկեցիկ դիրքի տէր անհատներ են, որոնց ամէնքն ունեցածը հազիւ հարիւր հազար ոսկիին մէջն է:

Թերևս առարկուի թէ նշանակուած գումարներն հարազատ տեղեկագրութիւնն չեն կազմեր նոյն անհատներու հարստութեան. մենք Եգիպտոսահայոց հարստութեան քանակը եթէ նշանակեցինք, ո՛չ թէ անոնց նիւթական կարողութեան աստիճանը տեղեկագրելու մեր ընթերցողներուն, հաճոյք մը որ մեր իրաւասութիւնէն վեր է, հապա ի սէր սրբանուէր գործի մը, պաշտօն մը կատարած ըլլալու համար, որն որ մամլոյ պարտաճանաչութիւնն է:

Ուրեմն շարունակենք մեր հարցը. ինչի վրայ էր: Որո՞նք են այն մարմինները որ Հայաստանի որբանոցներուն նիւթապէս ու բարոյապէս կըրնան օգնութիւն հասցունել Եգիպտոսէն:

Գիշ մը առաջ այդ խումբին կարեւոր մէկ մասը կազմող Եգիպտահայ անհատներու շուրջը դարձանք ու իւրաքանչիւրին նիւթական կարողութեանը հաշիւ մը տուինք մեր ընթերցողներուն. ինչո՞ւ. զգացնելու հա-

մար թէ անոնց իւրաքանչիւրը համեմատաբար իր ունեցածին պարտք մը ունի կատարելիք հանգէպ որբին. Փարիզի աշխարհային ցուցահանդիսին առթիւ այլևայլ կարևոր խընդիրներ լուծելու համար համաժողովներ կազմուեցան:

Յատուկ համաժողով մըն ալ գումարուեցաւ «ընկերային դաստիարակութեան», խնդիրը յուզելու նպատակաւ որոյ հոկտեմբերի նիստին մէջ Պ. Լէոն Պուլտուա ուժգին բանախօսութիւն մը ըրաւ. ատենաբանը մէկ երկու տեղ շեշտելով ըսաւ թէ՛ «Միհատ մը իր եսասիրութեանը յաղթելու է, և մինչև իսկ իր ընկերը՝ իր անձէն աւելի սիրելու է»:

Մեր Եգիպտահայ հարուստ դասակարգին անդորրութիւնը վրդոված չըլլալու համար, գործնականին մէջ արդէն անիրականալի և սոսկ ընկերվարական սոյն հարուստն վանենք, որ հարուստներու գլխուն գնդակի նման կը տեղացնէ Պ. Պուլտուա. բայց գէթ քիչ մը ևս հետևինք՝ և պիտի գտնենք կարևոր տեղ մը ուր կ'ըսէ միւսնոյն Պ. Պուլտուան. «Հարուստը աղքատին հետ ընկերութեան մէջ միշտ ընթացիկ հաշիւ մը ունի. տետրին մէկ երեսը պարտք, միւս երեսը պահանջը նշանակուելու է»:

Այս պարբերութիւնն ալ եթէ կծու կը թուի, կրնանք աւելի մեղմօրէն բարեփոխելով ու ժամանակի պահանջման համեմատ ըսել. «Հարուստին և Հայ սրբին մէջ ժամանակի մը համար պարտք և պահանջի հաշիւ մը պէտք է որ բացուի» ու այլ ևս մեր հարուստ դասակարգին ըսելիք չի մնար ես':

Ուրեմն վերագառնանք մեր որբին ու անոր նկատմամբ տեսնենք Եգիպտահայուն գործունէութիւնը ինչ պիտի ըլլայ. գործունէութիւն որուն վրայ քիչ մը վերջը պիտի խօսինք, Որբախնամ ընկերորդեանց կարգին:

Անցնինք Մամուլին՝ որ որբերու օժանդակ մարմնոյն երկրորդ անդամն է, ու երկու խօսք ընենք:

2. Մամուլը. — Եգիպտահայ մամուլի հասցէին՝ արդէն «Նոր-Օր»ի 27րդ. թիւին մէջ «Հայ մամուլի հարցը» անուան ներքև խմբագրական տողեր նուիրուեցան ժամանակին:

կրկնած չըլլալու համար հոն մուտք գտած ասացուածներն, ընթերցողաց ուշադրութեանը կը յանձնարարենք վերընթեանու վայն և գատել ներկայն:

Հետևաբար անցնինք բացատրելութե հայաստանի որբը՝ Եգիպտոսայ մամուլէն ինչ գործունէութիւն և կամ ծառայութիւն կրնայ սպասել:

Ինչպէս անհատ մը նմանապէս Մամուլը դիտակից ըլլալու է իւր դերին. բայց ատի՛ մամուլը վարող անհատին և կամ մարմնոյն կարողութեանէն կախեալ է (\*):

Իւր դերին գիտակցութիւն ունեցող այսինքն իւր պարտքը ճանչցող մամուլը այն է՝ որ հետաքրքրութեամբ կը հետևի քաղաքային, ընկերային ու նամանաւանդ ազգային ամէն կենսական խնդիրներու շուրջը, ու ատոր վերաբերեալ համեստ ու տրամաբանական հարցեր կը խմբագրէ, այժմէութիւնը կը յարգէ, ու թարմ լուրերով կ'օժտէ հանրութիւնը:

Այլպիսի մամուլը՝ ճշմարիտ մամուլն է որ հաւատարմաբար կը ծառայեցնէ զինքն հանրութեան ու ազգին օգտին, և ոչ թէ անձնական զրձուկանց:

Իւր խիզը այնքան կը տանջէ, որ միջևիսկ կը զգայ թէ երբ բաժանորդ մը կը վճարէ իւր բաժնիդինը՝ իրաւունք ունի ըստ օրինի իւր վճարած գումարին փոխարէն՝ օգուտ վայելել:

Ինչ կընէ ժողովուրդը. կը փութայ շտրհաւորել այդ մամուլը, ու սիրով կ'ունկնդրէ նորա ամէն մէկ բառը:

Ընդհակառակը միևնոյն ժողովուրդը զգուսնօք կ'ատէ այն թերթը որ պաշարի չզոյլութենէն վհատած, կը լեցնէ իր էջերն ունայն ու սնտոի պարբերութիւններով:

Ժողովուրդը չունկնդրեր այն թերթերը որ երբէք չեն պարունակեր թարմ լուրեր: Չեւքն իսկ չը գացուներ այն թերթին որ հանրածանօթ դարձած է ողորմելի և զլսացաւի վայրահաշուութիւններով:

Կ'արհամարհէ թղթակցել, մինչև իսկ ունէ ազգաբարութիւն զրկել այնպիսի թերթի մը՝ որոյ սինակներն արատաւորուած են ու կեղծոս անուամբ մկրտուած:

Կ'արգահատի հոն տրուած աշխատեան (հմէին) վրայ, գրաչարի ծախքերու, գիրերու, կն. կն. թերթի մը համար որ առաջի օրէն դատապարտուած է մահուան, նման թոքախտաւորի մը որ կ'ապրի բայց մահը մօտալոտ:

Կը հարցնենք, այս կարգի մամուլէն ինչ ծառայութիւն կրնայ սպասուել, քանի որ ազգային և ընկերային ամէն կենսական խնդիրներ, անոր դերքէն և վիճակէն շատ բարձր կը մնան:

Այո՛, ազգին, որբին, հանրային

(\* «Մամուլ» բառը՝ լրագիրէ գատ, թերթերը տպագրող մեքենայի մշակութեամբ ալ կը գործածուի. հետևաբար հոս «Մամուլ» ըսելով՝ մեքենան դարձնող ֆէլլաինը չենք ուզեր հասկնալ, հասկալ թերթի ուղղութիւն տուող խմբագրիմ հոգեկան ու բարոյական կարողութիւնը:

գաստիարակութեան, Ազգային վարչութեան գործոց ուղղութեանը կրնայ ծառայութիւն մատուցանել այն մամուլը՝ որ իւր բարոյական արժանիքով ինչ հաւաքած է իւր շուրջը մաքնիսի նման՝ ազգին, ժողովրդեան, ու վարչութեան համակրութիւնը:

Այս կերպով մամուլը՝ ազգին, ու ազգն՝ մամուլին օժանդակ եղած կը սեպուի: Արդարև մամուլը ինչպէս որ ժողովրդին ու ազգային վարչութեան պէտք ունի, նմանապէս ժողովուրդն ու ազգային վարչութիւնն ալ՝ մամուլին պէտք ունի:

Ոչ ամբաքէն «Նոր Օր» օժանդակ մարմնոյ մը գերը պիտի կատարէ, յանուն որոց՝ առաջի Եգիպտոսայ հարուստին ու տեղւոյս՝ Որբախնամ ընկերութիւններու, որոց համառօտ՝ տեղեկագրութիւնը պիտի տանք ինքերք ինչպէս Եգիպտոսայոց հարուստին համար ըրինք, որոյ գործունէութեանը համար ևս երկու խօսք պիտի խօսինք:

(Շարունակելի)

**ՊԱՏԵՐԱՉՄԻ ՄԸ ՀԵՏԵՒԱՆՔԸ ԵՒ ՄԱՐԴԱՆՈՒԹԻՒՆԸ**

«Մանտեգայայի» ժառանգականութեան վրայ հեղինակած մի հրատարակութեան մէջ պատերազմին՝ ապագայ սերունդներուն վրայ ունեցած կործանիչ ազդեցութեանը վրայ խօսուած պահուն՝ գաղղիոյ միջհասակներուն բազմապատկուելուն իւր պատճառ ցոյց կը տրուի Նափոլիոնեան պատերազմը: Այդ պատերազմները ունեցուցին բնականօրէն ֆրանսացի զինւորներ, որոնք ամենքն ալ կընտրուէին բարձրահասակ և կորովի մարդիկներէ. իսկ տունը մնացած կարճահասակներն էին որ կամուսնանային ու ատոնցմէ յառաջ եկած սերունդն ալ անոր հետ հետեանօք կարճահասակ ելաւ:

Մարդաբանը շարունակելով զիտել կուտայ թէ պատերազմի հետեանքն որքա՞ն ծանր է այս տեսակէտով. նիւթական ջնջին շահերու համար՝ աշխարհի բնակչութեան ամենահզօր մասը հետզհետէ բնաջինջ ըլլալու կը մօտենայ:

**Ա Չ Գ Ա Յ Ի Ն**

**ՀՈՐԱՏԱՐ ԵՒ ՎԱՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՐԲԱԻՆԱՆՔԸ**

Անցեալ թուով երբ ծանուցուեցաւ՝ Ամեն Օրմանեան սրբազանի կողմանէ զրկուած շտրհակալեաց նամակի պարունակութիւնը, մտացուած էր նաև յիշելու թէ՛ ի նպատտ որբերու Պոլտոյ ազգային Պատրիարքարանը զրկուած քառասուն անգը. ոսկի գումարն՝ մէկ երրորդ արգիւնքն է այն վիճակահանութեան, որ Արասպուրականի Որբախնամին և Արարկիլի Հոգատարին Գործադիր Ժողովոց խորհրդակցութեամբ և գործակցութեամբ կազմակերպուած էին, և ոչ թէ՛ Հոգատարի Գործ, ժողովոյն առանձին:

**ՏԱՐՈՐԻՆԱԿ ԻՐԱՏԷ ՄԸ**

«Նոր Դար» մէջ կը կարդանք թէ թուրքիոյ Պետական խորհուրդը ծրա-

գիր մը պատրաստած է, որոյ համեմատ՝ քրիստոնէից երախաներու մղըրտութեան վկայականները օրինաւոր նկատուելու համար յաշտ կառավարութեան, պէտք է որ նախապէս վաւերացուած ըլլան Թուրք մութարներու և իմասներու կողմէ:

Այս լուրը թէպէտ անհաւատարի, եթէ ստոյգ է, քրիստոնէական հոգեւոր իշխանութիւնը՝ իմասներու և կրօնամուլ իշխանութեան մը ազդեցութեանը տակ գրած կ'ըլլայ:

**ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԱՊԱՏԻՅԷՆԵՐԸ**

Ուրխութեամբ կը տեղեկանանք թէ Հայոց Ազգային Առաջնորդարանի վերին Եգիպտոսի Ապատիյէները՝ որոնց համար կառուած կար թէ մի գուցէ այս տարի Նեղոսի շուրջուն նուազութեան հաւանականութեամբ փնտրի ենթարկուէր, բարեբաղդաբար կարծուածէն խիստ նուազ եղած է փնտրը:

**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԻՒԱՆԱՏՈՒՆԸ**

Եգիպտոսի նորընտիր Առաջնորդ Գեր. Այվազեան սրբազանի մօտաւոր գալտեանը առթիւ՝ Գահիրէի Առաջնորդարանի Դիւանատունը երեկուրնէ սկսեալ՝ Առաջնորդարանի յարակից շէնքին մէջ փոխադրուած է, շքեղապէս կահաւորեալ:

Յաւօք կը տեղեկանանք Տիկին Ա. Սոսոյեանի մահը, ամուսին Տ. Մկրտիչ Սոսոյեանի, գործակալ պանդ Ղրնէզի ի Գահիրէ:

**ԲԱՐԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

Երէկուան աւուր հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ «Ըստ Բեոյ-նիշ Ձեյրուկի լրագրի վոն Պիւլօ» գերմանիոյ Նախարարապետ կոչուած է, որ միանգամայն պիտի վարէ Արտաքին Գործոց Նախարարի պաշտօնը»:

Արդարև ասի շատ հաւանականութենէ հեռի չէր, քանի որ արդէն Գերմանիոյ կայսրը գաղափարով հեշտ չէր Նախարարապետ Բուէսս Հօհենլօնի հետ, որուն այսօր կը յաշորդէ Պ. Պիւլօ:

Կայսրը իւր որոշումները յաճախ Պիւլօի խորհրդակցութեամբ կուտար, առանց Հօհենլօնի և կամ ժողովոյ դիմելու:

Վերջապէս Գերմանիոյ կայսրը ոչ Պիլզմարքին և ոչ ալ իւր յաշորդներու հետ համբարաշխ չուզեր վարուիլ:

**ՉԻՆԱՍՏԱՆ**

Երէկուան Բէօթերի հեռագիրը կը հաղորդէ թէ «Պ. Վալտերսի Բէթին հասաւ, ու անմիջապէս Չինաց Մայր-կայսրուհին պալատը իջաւ, միջազգային հետադիմերով շրջապատեալ»:

Յառաջիկայ շաբաթ օր օտար տէրութեանց ներկայացուցիչներ լիւհունկ-Չանկի հետ պիտի մտնեն բանակցութեանց՝ ի մասին հայտարար պայմաններու:

**ԱՆԳՂԻՍ**

Անգղիա ընտրողական գործողութիւններով կը զբաղի, որոնք դեռ աւարտած չեն:

Պ. Չէմպլըլէյն մեծ ճիգ կը թափէ այժմէն Նախարարապետի ապագան պատրաստել. նա կը գուշակէ որ Պ. Սալիզբըրի այլևս տարիէ մը անդին անկարող պիտի գտնուի գործելու:

Հոկտեմբեր 10ին զարնուած Բիւթերի հեռագիր մը կը ծանուցանէր թէ «Պ. Չէմպլըլէյն Սթուարտի մէջ ճառ մը արտասանեց յայտարարելով թէ իւր արտաքին քաղաքականութիւնը՝ միշտ պիտի կայանար հաստատա պահել տէրութեանց հետ ունեցած մտեւմական յարաբերութիւններն և յարեց թէ՛ «բայց և այնպէս ունէ իրաւունք չունիմ միջամտելու տէրութեան արտաքին գործոցը որ Պ. Սալիզբըրիի ձեռքն է»:

**«ՇԱՐԳԻՅԷՆ»Ի ԱՐԿԱՄԸ ՈՒ ԱՂԵԲՍԱՆԴՐՈՅ ԾՈՎԱՅԻՆ ԱՏԵԱՆԸ**

Առաջուց ըսուած էր, թէ մի քանի նաւատիրներ «Շարգիյէն» շոգեհաւին ընկղմած պահուն, փոխանակ ճամբորդներուն օգնութիւն փութալու, անխընձօրէն անոնց դրամը կողպուած էին ծովուն վրայ:

Յունական կառավարութիւնը որուն շուրջուն վրայ տեղի կունենային այս դէպքերը՝ քննութիւն կատարելով, անոնք որ կասկածի տակ էին վար դրամ (\*), գատելու համար իւր երկրին դատաստանովն ու անոնք որ կասկածելի չէին զրկուեցան ուղղակի Աղէքսանդրիա:

Ասոր վրայ գումարուեցաւ նաև Աղէքսանդրիոյ մէջ՝ Բրիտանական ծովային դատաստանական ատեանը, հարցաքննութիւն կատարելու համար, արկածին շարժառիթներուն մասին:

Նիտոբեր դեռ կը շարունակուին ու վկայներ կը հարցաքննուին հետզհետէ, ճամբորդներէն Մոհամետ էֆ. Ֆէհմի այն անձը որու յայտարարութիւնը «Նոր-Օր» թիւով հրատարակուեցաւ ժամանակին, նոյնը կրկնած է գատարանին առջև:

Ընդհակառակը Սոփրանիյէ նաւապետը բացարձակապէս կը հերքէ Ֆէհմիի ըսածները, և կը պնդէ թէ՛ նաւատիրները ո և է թերութիւն չունեցան, հետևաբար անոնց նկատմամբ եղած ամբաստանութիւնները սուտ կա հանէ:

Մինչդեռ միւս կողմէն կը լսենք թէ՛ Յունական կառավարութիւնը տեղեկացած ըլլալով որ նաւատիրներէն ու մանք՝ դրամը յափշտակելու համար մինչև իսկ ճամբորդին մասը ճեղքած

(\* ) Կառավարութիւն մը իմպլէտ որ իր ցամաքիմ վրայ գործուած ոմիլոմերմ իմք միայն դատելու իրաւունք ունի, իւր շուրջուն վրայ գործուած ոմիլոմերմ մմապէս իմք միայն կրմայ դատել:

Ասոր համար է որ տէրութիւնները միջազգային օրէնքի համաձայն իրենց ցամաքային և ծովային սահմաններմ շամացած են միշտ ճշդիւ որոշել:

Ծովային սահմանը՝ ցամաքէմ արձակուած թմզահօթով սովորութիւն եղած է որոշել՝ որուն հասած վերջնակէտը սահմանազուլի կը համարուի:

Ծ. Խ.

են, հրաման տուեր է որ դիակները գերեզմանէն դուրս հանուին բժշկական քննութեան ենթարկուելու համար:

Դժուար է, յուսալ որ ու է ճարտար բժշկական դիագնոստիկան կարող ըլլայ ճշգրիտ իրողութիւնը. քանի որ դիակները ցարդ բաւական ներքեալ վիճակի մը մէջ հասած են:

«Շարգիկէ»ի արկածին՝ թողուած ներուճ թիւը երեսուն է, Ատրոս կղզուն մէջ:

Վերջին պահուն կը տեղեկանանք թէ՛ ծովային ատենը իր վճիռը արձակած է, որուն մէջ կը հաստատէ թէ՛ նաւագետ և նաւաստի ամենքն ալ իրենց պարտականութիւնը յանձնափառ արիւթեամբ կատարած են. և կը յայտարարէ թէ՛ նաւուն ընկողմանը առթիւ ատոնք ամեն պատասխանատուութենէ զերծ են: Յունական աղբիւրներէ առնուած լուրերուն բոլորովին հակասական . . . :

### Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

#### ՈՐՄՈՐԴԻ ՀԱՄԱՐ

Նոր կանոնագրի մը համաձայն՝ գիւղէ և կամ մարդաբնակ տեղէ մը մինչև 230 մէթր հեռաւորութիւն՝ պղզտիկ թռչուն և կամ աղանիներ որսալը արգելուած է այսուհետեւ:

Սոյն կանոնագիրը՝ օտար և տեղացիներու նկատմամբ հաւասարապէս գործադրելի է:

Արգարեւ եգիպտական կառավարութեան միջոցաւ պատրաստուած կանոնագիր մը ցորչափ Միջազգային Ատենի կողմէ չը վաւերացուի, օտարներու նկատմամբ գործադրելի չըլլար. այլ միմիայն տեղացիներուն համար:

#### ՅԻԼԻՓԱՐԻ ԴԱՏԱՍԱՆԸ

Ազգաբնակչոց թրամվէյի, Ռամվէյի երկաթուղոյ և էնտրապրիէլ Պանդի ընկերութեանց բաժնեթուղթերուն գործողութեանց մէջ ինչ ինչ խարդախութիւններ գործած ըլլալու ամբաստանութեամբ, ասկէ ամիս ու կէս առաջ ձերբակալուած էր Ֆիլիփար որ յիշեալ ընկերութեան վարչութեան Տնօրէնի պաշտօնը կը վարէր:

Ֆիլիփարը որու շուրջը տեղական մամուլը այնքան մեծ աղմուկ հանեց, վերջապէս յանձնուեցաւ Ազգաբնակչոց զատաստանին:

Հազիւ երրորդ նիստին մէջ աւարտեցաւ Ֆիլիփարի հարցաքննութիւնը, ուրկէ վերջը դեռ վկաները պիտի լուին. կը խօստանանք յայտարար սոյն կարեւոր խնդրոյն արդիւնքը տեղեկացնելու ընթերցողներուն:

#### ՅՕՄՅԱԹ

Երկրախոյզները եգիպտոսի մէջ Փոսֆատի նոր հանքեր գտած են. ա՛հա դրամատէրներու համար գործ մը:

#### ՍՈՒՏԱՆԻ ԾԻԱՌՈՏԸ

Սուտանի կառավարութիւնը՝ Սուտանի հիւսիսային կողմը ծխախոտ հընձելը արգելած է. իսկ հարաւային կողմը ազատ ձգած է, կանխաւ արտոնութիւն ստանալու պայմանաւ:

— Գահիրէի Միջազգային Դատա-

րանի՝ ամառնային արձակուրդը աւարտեցաւ:

Առաջին նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հոկտեմբեր 22ին երկուշաբթի օր:

#### ԱՐԱՊԻ ՓԱՇՏԱԹԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Արապի փաշայի կինը և երկու զաւակները երեք Գահիրէ հասան՝ Սէյլանէն, ուր աքսորուած է Արապի փաշա 1882ի Ալեքսանդրոյ դէպքերէն ի վեր:

Երկու զաւակներէն մին աղջիկը՝ Աէյլանի մէջ ծնած ըլլալով, արաբերէնէ աւելի անգլիերէն գիտէ: Մեծ փոյթ կը տանին Խըտիփական պալատը՝ որ Արապի փաշա ևս վերադառնայ Եգիպտոս. Արապի բնաւ փափաք չունի, կրան, վերադառնալու:

#### ԵԳԻՊՏՈՍԻ ՄԱՔՍՍՈՒՆ ԾՈՒՐԲԸ

Եգիպտական Մաքսատան ութը ամսուան ժամանակամիջոցին մուտքը և առաջի տարուան հետ համեմատութիւնը հետեւեալն է:

Մուտք	
1900 Յունվար 1էն ցՍեպտ. 1	848,221
1899 » » »	1 779,864

Ինչպէս կը տեսնուի անցեալ տարուան վրայ 68,357 ոսկի աւելցուցած է մուտքը:

Միմիայն ծխախոտէն ութը ամսուան մէջ 181,937 եգ. ոսկի տուրք դանձուած է իսկ առաջին տարին 95,560 ոսկի:

Աղբը. Թռամվէյի ընկերութիւնը կրնայ օրինակ առնել ասկէ. ութը ամսուան մէջ 35,000 ոսկույ բացալը զոր ցոյց տուինք անցեալ թուով:

#### ՆՇԱՆԱՌՍՈՒԹԻՒՆ

Ամսոյս 18ին հինգշաբթի երեկոյեան ժամը 6 1/2ին տեղի ունեցած է Իպրահիմիյէ, Տիար Օհան Թոթվայեանի տունը, Օրվիթորիա Գայսերեանի նըշանախօսութիւնը ընդ Պ. Արմենակ Գասպարեան. ինդակցութիւն:

#### ՃԾԱՐՏՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԱԶԳԱԹԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՎՐԱՅ

(Տես ՅԱԼԵՂՈՒԾ «ՆՈՐ-ՕՐ»ի)

#### Վ Ր Ի Պ Ա Կ

Ա. երես, Ա. սինակ, 6րդ. պարբերութիւն, տող 2րդ. — «պարտաւոր» կը մնամ հիմա ձեռք առնուլ:

Ա. երես, Ա. սինակ, 8րդ. պարբերութիւն, տող 9րդ. — միջև այնպիս «հեշտին» և փորձ:

Ա. երես, 3րդ սինակ, 3րդ. տող. — ինչպէս կ'ըլլայ որ «իւր» ամենէն կանոնաւոր:

Ա. երես, 3րդ. սինակ, 11րդ. տող. — կրկին «չեղծանիլ» այսպէս:

Ա. երես, 3րդ. սինակ, 14րդ. տող. — անարգանաց «մեծութեան» զոր կը նետէ:

Ա. երես, 3րդ. սինակ, 31րդ. տող. — ապացոյցը «տալ» ընթերցողաց ինդերելով իրմէն և Միլտիչեանէն:

Ա. երես, 3րդ. սինակ, 33րդ. տող. — թաղականեան» տարրին:

Բ. երես, 2րդ. սինակ, 6րդ. տող. — «15/1/99». մնամ յարգանք:

Բ. երես, 2րդ. սինակ, 3րդ պար-

բերութիւն, 2րդ. տող. — «ընտրութիւն» յաջորդաց:

Բ. երես, 2րդ. սինակ, վերջին մաս, «Տ. Թովհ. Մովսիսեանց» Ատենապարտ:

Բ. երես, 3րդ. սինակ, 38րդ. տող. — թէ իրենց «խումբ» անդամներ:

Բ. երես, 3րդ. սինակ, 48րդ. տող. — որ ինչ որ «ինքը» կը մտածէ:

Գ. երես, 2րդ. սինակ 20րդ. տող. — իրաւամբ և առանց «հակասութեան» գործածելու:

Գ. երես, 3րդ. սինակ, 9րդ. պարբերութիւն, 6րդ. տող. — և ուրիշ «թաղականեան» ներու:

Ե. երես, 2րդ. սինակ, 6րդ. պարբերութիւն 9րդ. տող. — «իմ» ընկերութեան անդամակցութեան:

Ե. երես, 2րդ. սինակ, վերջին պարբերութիւն 4րդ. տող. — և երրորդն » » » » «11» »:

Ե. երես, 3րդ. սինակ, 5րդ. պարբերութիւն, վերջին տող. — գէթ այս մասին միաբերան «չվկայել»:

Զ. երես, Ա. սինակ, 5րդ. տող. — բացարձակ «գաւ» մը:

Զ. երես, Ա. սինակ, 7րդ. պարբերութիւն, 7րդ. տող. — պատուաբեր խրատոյաներու:

Զ. երես, 2րդ. սինակ, 6րդ. պարբերութիւն, 4րդ. տող. — կը բռնազատէ զիս «որ» անպատճառ արտասանեմ:

Զ. երես, 3րդ. սինակ, Ա. պարբերութիւն 11րդ. տող. — դատապարտելի «արարք»:

Զ. երես, 3րդ սինակ, 2րդ. պարբերութիւն 4րդ. տող — կուսակցական «շահերու»:

Զ. երես, 3րդ. սինակ, վերջին մաս. — դարձեալ ամէն մէկ անհաս իրաւունքներ ունի ազգէն և «ազգն անհասներէն»:

Զ. երես, 3րդ. սինակ, վերջին տող. — Պատ. ընթերցողաց «անաչառ» դատաստանին:

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### Մ Օ Ր Մ Ը Վ Ի Թ Տ Ը

#### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկու օրէ ի վեր անակնկալ ապշեցուցիչ լուրը անբացատրելի թախծութիւն մ'է պատած անոր երթնացեալ գեմքին վրայ: Աշխարհը այլևս այլափոխուած կը թուի խաւարման աչիրուն, բնութիւնը սեւեր է հագած, մարդկութիւնը՝ սգահամակ: Լուսաճաճանչ արեւը իր պայծառութիւնը չունի, ու լուսինը՝ տխուրներուն, սիրահարներուն մեղաւոյշ դիցուհին, զուրկ իր մեղամաղձոտ շողջողումներէն:

Ո՛հ, ի՛նչ կայ արդեօք. կոտորածներ: անգեղի ուրուակման է, որ գոթոց Սաղա յէջներէն շունչ առած խոշտանգելու կուգայ իր վշտամորմը հոգին: Քունը փախուստ տուած է աչերէն. հացը՝ աղի պատառ, ջուրը լեղի բաժակ. միթիւրակ շուրեր, հառաչանքին մէջ միայն կը փնտռէ իր սընունդը, երկրային սփոփանքը. «Աստուածս, աս ի՛նչ է իմ . . . քաշածս . . . լալու համար . . . զիս ստեղծեցիր . . . »: Ինձ՞՞ մայր: Երեսուն տարի ամբողջ,

անձկախարստ, ծարաւատանջ, յաճախ անպարտաճանաչութեան շնորհիւ Հայ գաւառացի կիներու սեփական հագարումէկ թըլաւորութեանց մէջ, անիծեալ դուրպիթի անվերջանալի ճամբան նայելէն ու նայելէն հալած մաշած է: Երկու տարիէ հետէ այդ անձայրածիր պապակը մասնակի յազեցնելու կոչուած է Ներսիսի փերեուն վրայ, իր նահապետական նախապաշարումին մէջ անհաճոյ, մահաբոյր Սողոմ Գոմեր, զօրեք: Ա՛խ. ու հիմա՛ նա որ իր անպատում երանութեան գոռելի առաքիան էր, իր ծերութեան աչաց լոյսը, ներկայ միակ սիրական հոգեհատորը, կրկին բաժնուիլ կուզէ, պիտի բաժնուի, երբ ինքը երկրորդ Սուտանաբնակ պանդուխտ գաւկի մը վերադարձին կ'սպասէ, անհամբեր, մի գուցէ . . . :

Երկու տարիներ երկու օրեր կին այլևս անոր համար, ջուրի պէս անցան սահեցան երանելի օրերը. գէթ այդ երկու տարիներու կարճ ժամանակամիջոցին մէջ՝ անընդհատ, գիշեր և ցորեկ, լիւսի վայելած ըլլար երջանակաւ տեսքը իր գաւկին որուն քով, արդեօք Հիմէնէն մաքնիտուած չըլլալուն, ընտանեկան յարկը կարեւորութիւն չունէր, ճաշարան մը ցերեկ և ննջարան մը՝ կէս գիշերը անցած, միայն ինք բուն յունի մինչև որ չի գայ: Դրան ամենափոքր թնդին մը ուրախութենէն վեր կը ցատկեցնէ, ի՛նք է արդեօք. աւա՛ղ, գիշերային արտասովոր յապաղում մը, հազարումէկ կասկածանաց կենթակէ զինքն, կը լափէ իւր այրած սիրտն, կը տրտնջայ, անէ՞քներ կուտայ «Գլխապ»ին, ընկերութիւններուն որոնք միմիայն կը ծառայեն զրկելու իւր որդիս՝ մօր մը քաղցրիկ տեսութենէն:

Կարծեմ Սթուհին-Տիբամայր՝ իւր առատագութ մարդասիրութեամբն լսած էր այդ մօրն աղերսը, որ անիծելով վերջապէս փուռեցած էր «Գլխապ»ը որու տխուր աւերակին վրայ պիտի հիմնուին եղեր Լսարան-Ընթերցատուն, որու մէջ պիտի գումարուին եղեր ժողովներ, հին խոսակերներու նպատակաւոր վայրահաշուութիւնները ջանախելու, հոն ի սէր ընկերութեան շահերուն, գիշերներ լուսցնելու, սոյն տեսնուի գիշեր ցերեկ կ'այրի իւր գաւակն. ահա գաղափարի յաղթանակն:

Այս անգամ ալ թէպէտ այդ մօրը համար որքան դժուար էր իրեն ըմբռնել «Լսարան-Ընթերցատուն»ը, այնքան ալ դժուար էր մաղթելու անոր փրատակումը, շէնք մը որ որբերու օգնութեան նուիրական յարկն պիտի ըլլայ. ա՛հ, նա կը ուրէ օրբերը. բայց կը տառապի իւր որդեղն վրայ որ հեզահամբոյր, գուարճաբան, երբեմն եռանդոտ, երբեմն երազող գուրքը, իր բարեկամներուն քով, գաղափարակից ընկերներուն առջնութիւն, ներսը՝ իր միակ մօրը քով բարկացոտ, մտաբազ, լուռ ու մունջ, լրագիր մը մէկ ձեռքը՝ մինչև իսկ սեղանին վրայ:

— Տղայ, բերանդ բաց ակ բան մ'ըսէ, նոր հարս և զիտնաս քի,

Ինչո՞ւ արգարեւ այս դատապարտելի լուսթիւնը, քանի որ ինք խորթ գաւակ մ'ըլլալու չէր:

Ո՛հ արթնցէք, խեղճ Հայ մայրեր, թօթափեցէք ձեր վրայէն խաւարի հնազարեան քողը. բացէ՛ք ձեր քնացող մտքերը լոյսին՝ գաղափարին առաջ: Կրթիւ տուէք ձեր մատաղահասակ աղջիկները, եթէ կուզէք որ օր մը անոնք ալ չզգոհին իրենց արթուն փեսաներէն: Պարզ, միօրինակ, քնաբեր, տղէտ ու ուսմիկ խօսակցութիւններ հրապոյր չունին նորերուն քով. պարկեշտութեան, հաւատարմութեան, գեղեցկութեան և տնտեսագիտութեան պահանջէն ի բաց՝

ուսում և կրթութիւն պիտի փնտռուին անոնց- մէ ալ: Ի՞նչ և ո՞րչափ ատեն խօսիլ ոչխարի րամիտ աղջկան մը՝ նորապսակ հարսի մը հետ, որ երկու հասարակ խօսք խօսելէ, ան ալ ո՛ր գիտէ ի՞նչ անհամ եղանակաւ, անդին բան չեն գիտեր:

Յուշիս երկուքն է: Երեկոյեան ժամը ճին երիտասարդ մը հեւ ի հեւ տուն կը վազէ: Ժողովէ մը կը վերադառնար, ժողովէ մը որուն համար յետաձգած էր ճամբորդութիւնը. Տան մէջ խումբ մը գաւառացի կի- ներ, զգոյն զէմքերնին, ուսմական լեզու- նին պահ մ'երազել պիտի տային ընդ հե- ոււոր արինազարդ երկինք մը: Ու մայր մը՝ արդէն կը հառաչէ. Երկուսոր Տէ՛ր, համբերութիւն տուր որ համբերէ, մինչդեռ մեկնողը, գէթ այդ օր, ուրախ է: Ուրախ է, որովհետեւ պիտի վերադառնայ Սուտան, սե աշխարհը, իր երրորդական հայրենիքը, ուր հրատապ արեգակնային մը տակ, անապատէ անապատ ճամբորդութեան պահուն, յաճախ ամիսներով Հայ Չաքարիա, Մահաբարութեամբ մը (Տէ՛ր բաւա զմեզս իւր) տիե- ղերահոյակ պիտի դառնար: . . .

Անգուժ երիտասարդ, Մահաբարութեան սովորեցար անգուժ ըլլալ. ի՞նչպէս ժպտուն է երբ մայր մը՝ արտասուածոր կուլայ: Չէ՛. բանտտեղծի սրտին չափ զգայնիկ սիրտ մ'ունի անի, այրիներու արգահատելի կացութիւնը, որբերու զժաղզ ճակատա- զիրը՝ իր խոր կարեկցութիւնը կը շարժեն: Բայց աշխարհը՝ նախ և առաջ գործնակա- նութիւն կը պահանջէ Հայութենէն. արտա- սուք և լաց ծերերուն բահանաներուն գոր- ծը պիտի ըլլայ:

Ու կուզէ որ Հայ ծնողքներ Հայուն կա- ցութեան գիտակցութիւնն ունենան, իրենց ծնողական գուրգուրանքին չափ մը դնեն, սէրը միայն միշտ վառ պահելով սրտերնուն մէջ. կուզէ որ Հայ մայրեր՝ իր մօրմով օ- ըրնակ անուն, կարծրասիրտ ըլլան, ու՝ Թրանսպարան հիանալի ասպետուհիներուն նման՝ իրենց զաւակներուն ըսեն:

— Զաւակներս, սիրելի Ռոպէստօններ, ձեր պատերազմի դաշտը այլեւս համօրէն աշխարհն է: Գացէք ի սփիւս աշխարհի: արհամարհեցէք լայնատարած ոլիկանը, կա- տաղի աղբիւններն ու ամպրոպայոյդ փոթո- ըրիկները: Նետուեցէք կենսապայքարի մըր- ցումին մէջ. գնացէք ուր որ ձեզ կը կան- չեն ոսկին, շահ, վաճառականութիւն, պաշ- տօն, բարոյական թէ նիւթական յառաջի- մութիւն: Ձեր յառաջիմութենէն պիտի օգ- տուին հայրենիքը և մենք: Մի մոռնաք հայրենիքը, ազգը և լեզուն, ու մեր մայ- րական գուրգուրանքին, մեր կարօտամեծ համբերութեանը իրը վարձատրում՝ ձեր մեծ պարտականութիւնը թող ըլլայ, հեռու- էն թէ մօտէն՝ երկանիկ պահել մեզ մինչեւ մեր կենացը վերջը: Եւ Աստուած ըլլա՛յ ձեզ միշտ ապաւեն:

Մնաց բարեաւ արդ, խաթուններ. մնաս բարեաւ ո՛ր մայրիկ. եթէ լսեմ որ դեռ կու- լաս ա՛լ նամակ չպիտի գրեմ . . .

— Չէ՛, չպիտի . . . լամ . . .

Ու այս հաւատքով կը մեկնի «Վաղուան ուղեւորը», ցաւը սրտին մէջ՝ ոչ թէ մօրմէ մը բաժնուած ըլլալուն՝ այլ միայն լսարան- լիւթեցատուն ընկերութենէն, «Նոր-Օր»էն, որոնց բարգաւաճման ամենաշեղբ փափա- ղողներն է:

Վատի—Հալիս Ս. Օ.

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միութիւն». — Թ. Ս. Փափագեանի

### ԳԱՖԷ ԵՓՐԱՏ

Ապրիլի Պապ-Էլ-Պոսթան Հրատարակից վրայ եւ Նուագածուց խմբի Զօրանցի դիմացը **ՕՋԱՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ** **ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.**

Մէկ հատիկ Զբօսարանն է Գահիրէի մէջ, ուր կենցաղաւէր մը կարենայ ան- ցընել հաճախի ժամանց մը. Ապրիլի ընդարձակ հրատարակից գովազին օղբ, վայրին սքանչելի դիրքը, և սպաս- ներուն մաքրութիւնը, ըմպելեաց ա- նարատութիւնը. այս ամեն առաւելու- թիւններով ԵՓՐԱՏ ԶԲՕՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկուն, ժամադրու- թիւն ըրած են, ու ժամերով կը վա- յելեն երկանիկ ընկերութիւն մը:

Ամեն կարգի զսվարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զատ մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ըն- տիր միջոցներէ օչարակ. ամենէն զըժ- ուարահաններն անգամ պիտի գո՛հ մնան եփրահէն:

### ՃԱՅՄԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

**ՄԻՋՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ**  
Շարա Ապու-Սուպահ  
Նիւու-Տնիվեսի Ղեկաւարանի դիմացը.

Օղեստուն ու զուարճալի դիւր. մա- քուր ու վայելելի սպաս. համեղ ու աննդարար կերակուրներու զանազա- նութիւնն, անխարդախ պատրաստու- թիւն. ճոխ ճաշացուցակ մը դիրա- մասուելի գիններով ահա՛ Գազանճ- եան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վտահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

### ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՕՍՕՅԵԱՆ**

Լիոնի հանրաճանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մ. Կրտիչ Սօսոյեան, որ իւր հրատարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամե- նուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղա- քապետութենէն պաշտօնապէս վա- ւերացուած փոխանորդագրի համա- ձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ դրամական և ֆուէտի Ֆոնսիլիէի, Վիլ տը Բարիի գոր- ծողութիւններ, զանաւանդ. Սմա- կան չնչին գումարի մը խնայողու- թեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհաստի բաժնեթուղթ մը, վիճակա- հանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւ- պառի վրայ փաստաբան Ռաբբաքիի գրասենեակը:

### ՁՈՒԼԻԶ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

**ՏԵԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԲ ՍԱՐԳԻՍԵԱՆ**  
Ս. ԳԱՐԲԵՆԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Կը ձուլեն, կը շինեն, երկաթէ ու արյուն զանազան գործիքներ ոսկերչու- թեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, ևն., յա- ճախորդները գոհացնող պայմաններով:

### Ա. Չ. Դ

Ազգային Գալտեան վարժարանի համար Օգոստիան — Ուսուցչուհի մը պէտք ըլլալով, փափաքողք կրնան դիմել վարժարանս և բանակցել Տնօ- ըրնութեան հետ:

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ  
Գալտեան երկու վարժարանի

### ՊԵԼԱԵԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ  
ԱՐԱՅ ԵՒ ՏԻՎԱՆՑ  
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ  
Ապրիլի մեծ պողոտային վրայ Տայիրայի Օսանիի դիմացը, նախկին Եղիգրակեան գործիցներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարա- րենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմող Պատ. յաճախորդները, գործի մաք- րութեան, գիններու չափաւորութեան և ճշգրտագործեան կողմէն:

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւան- դուին նաև ձեռագիրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարե- լազործուած մէթոտով,  
Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

### ԱՏԱՄԱՐՈՅԹ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գաստիկոնը:

Կը բժշկէ բերնի և ակոսայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղբառ- ները ձրի կը գարմանէ ամեն օր, ա- ուսուտեան ժամը 8էն 9:

**Տ Պ Ա Ր Ա Ն**

**Ի ԳԱՀԻՐԷ**

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ. ՍՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

\* **ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ** \*

**ԹՍԻԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ**

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա- րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, չրջաբերականներ, այցիտոմսեր, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.:

Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամօք եւ ճաշակաւոր սպազութեամբ:

**ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ**